Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 13-ի N 195-Ն որոշման

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ

1. Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների հասկացություններն օգտագործվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի իմաստով:

2. Սույն չափանիշների իմաստով գիտական հետազոտություններ են համարվում ձեռք բերած գիտելիքների ընդլայնման, նոր գիտելիքների ստացման ու կիրառման նպատակով կատարվող՝

1) կիրառական գիտական հետազոտությունները, որոնք հիմնականում գործնական նշանակություն ունեցող և որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտություններ են.

2) փորձարարական մշակման աշխատանքները, որոնք գիտական հետազոտությունների կամ գործնական փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքների վրա հիմնված և մարդու կյանքի ու առողջության պահպանմանը, նոր նյութերի, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի կամ մեթոդների ստեղծմանը, ինչպես նաև դրանց հետագա կատարելագործմանն ուղղված աշխատանքներն են:

3. Գիտական հետազոտությունների կամ փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու համար դրանք պետք է միաժամանակ բավարարեն սույն կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված չափանիշներին՝

1) նորույթի չափանիշ՝ գործունեությունը պետք է ուղղված լինի նոր կիրառական գիտելիք ստեղծելուն, որը նախկինում գոյություն չի ունեցել կամ չի կիրառվել տվյալ համատեքստում: Գործունեության արդյունքը պետք է լրացնի գոյություն ունեցող գիտելիքների բազան և ներգրավի նոր գաղափարներ կամ հասկացություններ: Նորույթ լինելու չափանիշը կապված է նաև համատեքստի հետ: Նորույթ պարունակող գործունեությունը չի ներառում ստանդարտ գործընթացները կամ արդեն հայտնի գիտելիքի կիրառումն առանց փոփոխության.

2) ստեղծարարության չափանիշ (ոչ բացահայտ հայեցակարգերի և հիպոթեզների վրա հիմնված լինելը)՝ գործունեությունը պետք է հիմնված լինի ստեղծագործական աշխատանքի վրա, որտեղ կիրառվում են բնօրինակ և ոչ ակնհայտ մեթոդներ, գաղափարներ կամ հիպոթեզներ: Ստեղծագործական գործունեությունը պահանջում է մարդկային մտքի և երևակայության ներգրավվածություն՝ նոր լուծումներ գտնելու համար, որը ներառում է նոր մեթոդների մշակում, փորձարկումներ, նախատիպերի ստեղծում կամ նոր կիրառությունների հայտնաբերում: Ստեղծագործական չէ այն գործունեությունը, որը սահմանափակվում է ստանդարտ գործընթացներով կամ սովորական փորձարկումներով.

3) վերջնարդյունքների անորոշության չափանիշ՝ գործունեությունը պետք է ներառի պարտադիր անորոշություն, այսինքն՝ արդյունքը չի կարող ամբողջությամբ կանխատեսվել կամ երաշխավորվել նախապես: Անորոշությունը վերաբերում է երկու հիմնական գործոնի՝

ա. արդյունքի անորոշությանը՝ հնարավոր չէ հստակ իմանալ, թե արդյոք նախագիծը կհասնի իր նպատակին,

բ. ռեսուրսների անորոշությանը՝ չկա լիակատար վստահություն, թե որքան ժամանակ, գումար կամ ջանք կպահանջվի հաջողության հասնելու համար.

4) համակարգվածության չափանիշ (բովանդակային ծրագրումը և ֆինանսական նախահաշվարկը)՝ գործունեությունը պետք է իրականացվի նախապես պլանավորված, համակարգված և ֆինանսապես կազմակերպված ձևով: Պետք է հստակ սահմանված լինեն՝

ա. նպատակները, թե ինչի համար են իրականացվում գիտական հետազոտությունն ու փորձարարական մշակումները,

բ. մեթոդաբանությունը, թե ինչպես է իրականացվելու,

գ. ռեսուրսները՝ ով և ինչ միջոցներ են ներգրավվելու (ֆինանսներ, ժամանակ, աշխատուժ).

5) փոխանցելիության կամ վերարտադրելիության չափանիշ՝ գործունեության արդյունքները պետք է լինեն փոխանցելի կամ վերարտադրելի, ինչը նշանակում է, որ նոր գիտելիքը պետք է հնարավոր լինի կիրառել, փոխանցել կամ կրկնել այլ վայրում կամ այլ հետազոտողների կողմից: Գործունեության արդյունքը պետք է լինի փաստաթղթավորված և հաղորդակցելի, որպեսզի այն հնարավոր լինի՝

ա. փոխադրել՝ կիրառել այլ ոլորտներում կամ նոր նախագծերում,

բ. վերարտադրել՝ հաստատել և կրկնել այլ հետազոտողների կողմից՝ նույն պայմաններում:

4. Սույն հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված անորոշության բացակայության դեպքում գործունեությունը դիտարկվում է որպես սովորութային կամ արտադրական գործընթաց:

5. Սույն հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառության նպատակով չպլանավորված կամ ոչ համակարգված փորձարկումները, ինչպես նաև սովորական արտադրական գործընթացները չեն համարվում գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ:

6. Սույն հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետի կիրառության նպատակով անհատական կամ մեկանգամյա լուծումները, որոնք չեն փաստաթղթավորվում կամ չեն կարող կրկնվել, չեն դիտարկվում որպես հետազոտությունների և փորձարարական մշակումների արդյունք:

7. Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակման աշխատանքները որպես այդպիսին որակելու չափանիշների կիրառման ժամանակ չեն գնահատվում հավաքագրման, կոդավորման, ձայնագրության, դասակարգման, տարածման, թարգմանության, վերլուծական և գնահատման գործողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ